Նախագիծ

Լրամշակված տարբերակ

Երկրորդ ընթերցում

Պ-350[9]-02.08.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ժգ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ժգ. Քաղաքացիական եւ ծառայողական զենքի, ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիա տալու լիազոր մարմնի գործառույթը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 7. Ռազմարդյունաբերության ոլորտում պետական լիազոր մարմինը
(վերնագիրը խմբ. 16.07.20 ՀՕ-382-Ն)

1. Ռազմարդյունաբերության ոլորտում պետական լիազոր մարմինը (այսուհետ՝ պետական լիազոր մարմին)՝

1) հանդես է գալիս որպես պետական պատվիրատու.

2) մասնակցում է զինված ուժերի և այլ զորքերի զարգացման պլանների, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի մշակմանը.

3) մշակում է՝

ա. ռազմական կարիքների համար գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների պետական պատվերի ծրագիրը,

բ. ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագիրը, որը ներառում է ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունը և միջոցառումները,

գ. ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման կարգը,

դ. ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող կազմակերպությանը բազայինի կարգավիճակ տալու կարգը և այդ կազմակերպությունների ցանկը,

ե. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների գրանցման կարգը,

զ. ռազմական ապրանքների, գույքի և ծառայությունների գների պետական կարգավորման մեթոդները, դրանց կիրառման առանձնահատուկ մեխանիզմները և ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման գնի որոշման կարգը,

է. պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող նյութական արժեքների ցանկի մշակման և վարման կարգը,

ը. ՌԱՀ-ի կազմակերպությունների գիտաարտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և վարման կարգը,

թ. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պետական աջակցության առաջնահերթությունները և աջակցման ձևերը՝ ըստ ռազմատեխնիկական և ռազմարդյունաբերության քաղաքականության,

ժ. գիտական և գիտատեխնիկական արդյունքների պետական հաշվառման կարգը,

ժա. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական պետական փորձարկումների անցկացման կարգը.

4) իրականացնում է՝

ա. ռազմական ապրանքների, գույքի և ծառայությունների գների պետական կարգավորումը՝ համաձայն սույն օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջների,

բ. ռազմական կարիքների համար գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարումը՝ հանդես գալով որպես պատվիրատու,
գ. ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ համագործակցությունը,
դ. ռազմարդյունաբերության ոլորտում գիտական և գիտատեխնիկական արդյունքների պետական հաշվառումը,
ե. ՌԱՀ-ի բնագավառի մասնագետների վերաբերյալ տեղեկատվական բազայի վարումը,
զ. ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման վերլուծությունը,
է. ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների կայուն գործունեության ապահովումը,
ը. ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական բազայի ստեղծումը,
թ. ռազմարդյունաբերության ոլորտում միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումը,
ժ. իր լիազորությունների սահմաններում մասնակցում է միջազգային ռազմատեխնիկական համագործակցության իրականացմանը,
ժա. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների ամփոփ ցուցակի վարումը,
ժբ. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական աջակցության ծրագրերը,
~~ժգ. զենքի արտադրության լիցենզիա տալու լիազոր մարմնի գործառույթը,~~
Քաղաքացիական եւ ծառայողական զենքի, ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիատալու լիազոր մարմնի գործառույթը,
ժդ. իր իրավասության սահմաններում ապահովում է պետական պատվերի կատարման և ռազմական արտադրանքի որակի հսկողությունը,
ժե. կազմակերպությունների զորահավաքային նախապատրաստության աշխատանքների և առաջադրանքների համակարգումը,
ժզ. իրականացնում է ռազմարդյունաբերության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:
(7-րդ հոդվածը խմբ. 23.03.18 ՀՕ-307-Ն, 16.07.20 ՀՕ-382-Ն)

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» (*Պ-350-02.08.2022-ՊԱ-011/1*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Զենքի շրջանառության կարգավորման մասին» Պ-350-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[2]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[3]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է

4.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Հիդրոօդերեւութաբանական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[4]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
5.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ինկասացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[5]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
6.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[6]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
7.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[7]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
8.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Պ-350[8]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
9.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ**	«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[9]-02.08.2022-ՊԱ-011/1օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

10.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ**	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Պ-350[10]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
11.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Պետական տուրքի մասին» Պ-350[11]-02.08.2022-ՊԱ-011/0 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
12.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[12]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
13.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[13]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
14.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[14]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**